№ 2 ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐ 28

1895

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԷՀՐԱՆ ՇԱԲԱԹ ՅՈՒՆՎԱՐ 28 № 2

# ՇԱՒԻՂ

«ՇԱՒԻՂ» տարեկան գինը 10 ղրան, կէս տարուանը 6 ղրան։ Առանձին համարները 5 շահի։

Արտասահման տարեկան 8 ֆր. կամ 3 ռուբլի կէս տարուանը 5 ֆր. կամ 2 ռուբլի։

Արտասահմանից փողի համար պիտի դիմել հետեւեալ հասցէով. Черезъ Баку въ Энзели Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. Бекъ-Назарову.

«ՇԱՒԻՂ» ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ՏԱՐԵԿԱՆ 50 ՀԱՄԱՐ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ

«ՇԱՒԻՂԻ» խմբագրութիւնը բաց է 10-ից մինչև 2 ժամը. (բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւնները ընդունվում են ամեն լեզուով իւրաքանչիւր բառին մի անգամուայ համար 1 շահի։ Արտասահմանի յայտարարութիւնները բառին 1 կոպէկ։ Նամակները, նաև Պարսկաստանի բաժանորդագրութեան՝ հասցէ. Rédaction «CHAVIGH» Téhéran. (Persē)

## ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Մեր Դրօշը.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Նամակ Դավրէժից. Նամակ Ուրմիայից. Նամակ Դավրէժից. Ներքին լուրեր. ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մամուլի Տեսութիւն. Արտաքին լուրեր.—Խառն լուրեր. Յայտարարութիւններ. ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ.—Առաքինութեան Մրցանակներ

### ՄԵՐ ԴՐՈՇԸ

Այս համարի մէջ տպւող Դավրէժի թղթակցութիւնները պարզում են մեր առջև այդ քաղաքի Հայ հասարակութեան գործերի դրութիւնն էլ։

«Կեղտոտութիւններ դպրոցներում—ասում է թղթակցութիւնը—հասարակական կեանքում, եկեղեցում, հոգաբարձական և ուսուցչական մարմինների մէջ...»

Իսկ «Մշակից» արտատպած թղթակցութիւնը նկարագրում է մեզ այնտեղի ինտելլիգենցիայի զբաղմունքը։

Այսպէս, Դավրէժն էլ է յառաջդիմում, Թէհրանի պէս, դէպի մի սոսկալի անկում։ Եւ ով գիտէ դեռ Սպահանի գործերի դրութիւնը։

Ի՞նչ է այս խսկապէս. գուցէ մենք բոլորս սխալվում ենք, գուցէ ի զուր են «Շաւիղը» և նրա թղթակիցների յոռետեսութիւնը, գուցէ այդ բոլորը առաջ է գալիս գրողների ջղային գրութիւնից և կամ թէ նրանց երեւմիական կականներ գործելու սիրուց։

Գուցէ ամեն ինչ լաւ է թէ Թէհրանում, թէ Դավրէժում և թէ Սպահանում և մենք ի զուր ենք աղմուկ գործում։

Եթէ «Շաւիղը», եթէ նրա և միւս ազատամիտ թերթերի թղթակիցները ոչ մի մխիթարական լուր չեն հաղորդում պարսկահայերի կեանքի մասին, թող հաւատացած լինեն բոլորը, որ այդ վարմունքը թշնամական ոչ մի նշոյլ չէ բովանդակում իր մէջ։ Նրանք երբէք չէին կամենալ կաչաղակների կռինչներին, անմիտների թշնամական ցոյցերին և կամ վայրենիների կոպիտ խօսքերին ենթարկուել։ Նրանք ամեն բան պարզում են հասարակութեան գիտակցութեան առջև միայն այն սկզբունքով, որ վէրքը քանի թագցնես այնքան աւելի մահաբեր կը դառնայ, որ մի խոց բուժելու, մի չարիք վերացնելու համար, հարկաւոր է նրան մերկացնել և զննել ամեն կողմից։

Բայց ահա հէնց այդ գիտակցական քայլն է, որ հանդիպում է տհաճութեամբ ակոսւած դէմքերի, այլուրենական դատողութիւնների։ «Մի՞թէ կարելի է որ հայը հայի վատը յայտնի»—գոչում են շատերը, «Մերն է, պիտի ծածկել մի կերպով» կրկնում է երկրորդը, իսկ երրորդը մինչև իսկ գտնում է որ ազգատեցութիւն է պակասութիւններ թւելը, որ ազգասէր մարդը պարտաւոր է միշտ գովել իր ազգին, նրա միշտ լաւը հռչակել, իսկ վատի վրա թանձր քող քաշել։

Գիտէք այդ ինչի է նմանում։ Այդ նմանում է նրան, որ մարդ տեսնի իր վրայի վէրքը և նրան փոխանակ լուանալու բուժելու, ծածկէ և թողնի որ գանգռենի փոխւի՝ մեանի այդ վէրքի կեղտից և սակայն գոչէ՝ թէ ինքը վէրք չունի։

Ահա թէ պարսկահայի ցանկութիւնը որն է։ Նա կամենում է, որ իր բոլոր կեղտերը մաքրութիւն համարեն, կամենում է որ չը դպչեն, չը բանան նրա ցաւերը, որ չը վիրաւորեն այդ վէրքերը գոյացնող վսեմաշուք կամ նուիրական անուններ կրող միկրոպներին, կամենում է որ փողով և տիտղոսով օժտւած անձերին ներեի պականել մթնոլորտը, իսկ ճշմարիտ խօսողներին և ազնւաբար գործողներին՝ արգելւի ասպարէզ ելնելը։

Մի խօսքով, ինչպէս որ երեւում է, ճշմարտութեան մերկութիւնը պարսկահայը գտնում է որպէս անամօթութիւն և երբ տեսնում է այդ մերկ մարմինը, թռնում է աշտարակների վրայ և այնտեղից գոռում է, որ մարդիկ «անբարոյականութիւն» են քարոզում, «պատուաւոր», անձերի վերաւորում և վսեմափայլների շուքը նսեմացնում...

Ահա թէ ինչ է ուզում պարսկահայը։ Մի՞թէ նա կարծում է, թէ այդ անելը հեշտ կը լինի մի թերթի համար, որ հասկանում է իր նուիրական կոչումը և որ շանտաժիստութեան վրայ նայում է որպէս անբարոյականութեան վրայ և որի դէվիզն է «ճշմարտութիւն, որքան որ նա մերկ լինի»։

Այո, այդ է մեր նշանաբանը, ով կարող է թող գայ մեր դրօշի տակը մըտնելու, իսկ ով փոքրոգի է այնքան, որ խոհեմութիւն է համարում հեռու մընալ նորանից, թող չը յուսայ մեզ իրեն դաշնակից գտնելու։

Մենք ուխտելենք մինչև մեր վերջին շունչը կռուել այդ սուրբ դրօշի տակ, ուխտել ենք ոտնատակ տալ ամեն քծնութիւն, ամեն ստորութիւն և այն բոլոր «նուիրական» համարւած աւանդական երեւը, որոնք մեր ազգին անշարժութեան մէջ կարող են փտեցնել. մենք ուխտել ենք չը խնայել փշրելու և ոչ մի ստութիւն, որքան որ նա զօրեղ լինէր, որքան որ նա աւանդական սրբութեան դրօշմով կնքւած լինէր։

### ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

#### ԱՌԱՔԻՆՈՒԹԵԱՆ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԸ

Տարին մի անգամ, Ֆրանսական Ակադեմիան ...րին եղած կտակների տոկոսով վարձատրում ...առաքինի գործերը, և այդ օրը, որ ճշմարիտ ...րոյականի փառաբանութեան է նուիրւած, ...կանական խինջոյքի մի օր է միանգամայն, ...ովհետև Ակադեմիայի անդամներից մէկը ...րդում է մի ատենաբանութիւն տրւած ...րձատրութիւնների վրայ։

...յս տարի այդ պաշտօնը ընկել էր հըռ...ակաւոր հեղինակ Լիւտովիկ Հալէվիին։

1742-ին է որ ֆրանսացի մի մարդասէր ...գը Մօնտիօն, հիմն դրաւ այդ առաքինական ...րցանակներին, 12000 ֆրանք նուիրելով ֆրան...ական Ակադեմիային, որպէս զի նա ա...ն տարի առաքինի մի գործ վարձատրի։ ...տոյ ահագին մի գումար էլ աւելցրեց իր ա...ջին նուէրի վրայ, ուրիշ շատերն էլ դրա...ց յետոյ նրա օրինակին հետևեցին, այնպէս ...ֆրանսական Ակադեմեան այսօր 98 մրցա...ակ ունի բաշխելիք՝ առաքինական գործերի ...մար, տարեկան 50000 ֆրանկ։

Առաքինութիւն ասելով ինչ պիտի հասկա...նք։ Պ. դը Մօնտիօն եւ իրենցից յետոյ եկողներն էլ այդ մրցանակները հիմնել են բարութեան, անձնուիրութեան, որդիական սիրոյ, ողորմութեան համար, քաջ անձերի համար, որոնք մահը աչք առնելով, ուրիշներին ազատում են. հաւատարիմ ծառաների համար, որոնք իրենց նեղութեան մէջ ընկած տէրերին չլքանելով՝ նրանց նեցուկ են լինում, և այլն։ Պայման է որ վարձատրութեան արժանի անձերը առնուին ընկերութեան ամենից խոնարհ դասակարգերից. այն աղքատներից, որոնք օգնում են աղքատների. եւ ֆրանսական Ակադեմեան, մի դարից ի վեր, հպատակում է Պ. դը Մօնտիօնի դիտաւորութեան։

Թողնենք որ ատենաբանը խօսի։

«Այստեղ մի խնդիր է ներկայանում, եւ լաւ է հրապարակով խօսիլ նրա վրայ կատարեալ անկեղծութեամբ։ Չենք անգիտանում, որ յաճախ մի քիչ հեգնութեամբ են խօսում մեր առաքինական մրցանակների վրայ։ Մեզ ասում են։ «Առաքինութեան մրցանակնե՞ր... շատ լաւ բան է այդ։ Բայց ինչպէս էք տալիս այդ առաքինական մրցանակները։ Ինչպէս էք երեւան հանում առաքինութիւնը։ Առաքինութիւնը, ճշմարիտ առաքինութիւնը պէտք է ծածկուի, անտես մնայ, ինքնզինքն իսկ անգիտանայ, և չգիտենայ թէ ֆրանսական մի Ակադեմեայ կայ որ մրցանակներ է տալիս մարդկային տառապանքի համար գթած ու ողորմած եղած անձերի։ Երեւում է ամեն տարի մի յանձնախումբ էք նշանակում եւ մի մեծ սեղանի վրայ դասակարգւած, թւագրւած, վաւերացւած չորս հինգ հարիւր նամակ ունիք, առաքինութեան մի ամբողջ լեռ։ Առաքինութեան մրցանակներ են ուզում ձեզնից։ Ո՞վ է ուզողը։ Առաքինական գործերի հեղինակները թերեւս։»

«Այո, պարոններ, այո, երբեմն... պէտք է խոստովանուել. բայց շատ քիչ է պատահում այդ, եւ անմիջապէս կասկածելի են նրանք, որ իրենց ձեռքով իրենց առաքինութեան հաշուեկշիռը շինել են եւ մեզ ասում են. «Այս ինչ օրը, այս ինչ ժամին, այս ինչ պարագայի մէջ, այս ու այն վկաների առջև, ես գթած ու արիասիրտ եղայ։»

«Խնդրանքների ուրիշ մի դասակարգ էլ կայ որին հետ անողոքելի խստութեամբ ենք վարվում. ընդհանրապէս գաւառացի ծերուկ պարոններ են որ գրում են. «Ես աքանչելի մի սպասուհի ունիմ որ երկար տարիներից իվեր գոհանալով չնչին մի ամսականով, ամենից գորովագութ խնամքներ շռայլում է ինձ։ Երբ մօտիցս դուրս գայ, չեմ իմանում ինչ պիտի լինեմ. երբէք չպիտի կարողանամ նրա պէսը գտնել, աղաչում եմ, պարոններ, առաքինութեան մի փոքրիկ մրցանակ տուէք նրան։ Ակադեմիան բնաւ ուշադրութեան չի առնում այդ խնդրանքները, նկատելով որ Պ. դը Մօնտիօն եւ իր հետևորդները ամեն տարի իր տրամադրութեան ներքոյ այդ 50000 ֆրանկի գումարը չեն դրած հաճելի լինելու համար ծերուկ պարոնների, որ հաւանօրէն իրենց սպասուհիներին ասել են. «Էյ, ձայն մի հանէք, ամսականի յաւելում մի ուզէք. առաքինութեան մի մրցանակ առնել կը տամ ձեզ»։

Բայց այս անընդունելի խնդրանքների մօտ—հինգ հարիւրից քսան երեսուն—Ակադեմիային ուղարկւած միւս խնդրագիրները գրեթէ բոլորն էլ նոյն ձեւի տակ են ներկայանում. ամենից սրտառուչ ու ամենից համոզիչ ձեւը։ Մի հատ առնեմ նրանցից եւ, հաւատացնում եմ ձեզ, պարոններ, թէ ձեռքիս եկածն եմ առնում, որովհետև ամենքն էլ իրարու են նմանում։ Լոզէռի գաւառի մէջ մի քանի հարիւր բնակիչով փոքրիկ մի գիւղից Ալբարէ-լը-Քոնթալէն ուղարկւած է։ Անհերև է որ գրելու համար գիւղի ամենից լաւ գրիչն են ընտրել և ընդօրինակողը իր ամէն խնամքը թափել է։ Մի քիչ հաստ գծաւոր թղթի մեծ մի թերթ է առել, և այդ թուղթը բոլորովին ճմրթկւած է, արատներով լիքը, որովհետև շատ ձեռքերից է անցել, բանւորների և գիւղացիների ձեռքից, որոնք բոլորն էլ ուզել են ստորագր-

սան (Կարինի սավեալներին) իրանց լռռմաներովը, իսկ «Հայադաւանները» ոչ միայն ստորագրութիւն բաց չարին և ոչ նրանց քարոզչի բաց արած ստորագրութեանը ստորագրեցին, մինչդեռ Հայ բողոքականները բոլորը, հարուստ թէ աղքատ, իրանց լուման ձգեցին այդ գանձանակի մէջ: Նոյն իսկ իրանց դպրոցի աշակերտները մի քանի օր պանիր հաց կերան ու 50 ղռան նուիրեցին յօգուտ սովեալներին:

Որը զարմանալին է, նա է, որ երբ պ. Յովսեփեանը մի բողոքական վաշխառու է գտնում, քիչ է մնում ամբողջ այդ դաւանութեան պատկանողներին վաշխառու անուանէ, առանց յիշելու որ հազարաւոր այդպիսիները կան «Հայադաւաններիս» մէջ, որոնք ծծում են խեղճ մշակի արիւնը, յափշտակում նորա օրհնեալ սպարէնը. դրանով մենք չենք կարող դատել մի ամբողջ Հասարակութիւն, մի ամբողջ ազգ, այլ կարողենք այդ տեսակներին միայն մարդ չանուանել, մարդկութեան ցանկից դուրս ձգել, լինի նա բողոքական — լինի նա հայադաւան...:

Մենք մեր խօսքը կը վերջացնենք ասելով, որ պ. Յովսեփեանը ոչ միայն սաստիկ սխալվում է, այլ և իր այդ յօդուածով մի կարգ մարդկանց սիրտը պղտորելուց ի զատ, ուրիշ ոչ ինչ չի արել:

Ե.

ՆԱՄԱԿ ԹԱՒՐԷԶԻՑ

—

18 դեկտեմբեր. 94

Ինչ է անում Թաւրիզը, կամ ո՞րքէս կարելի է ասել՝ Թաւրիզի երիտասարդ հայերը: Ապրում է մեռելային անշարժութեան մէջ. մի և նոյն պայղութեամբ, մի և նոյն անտարբերութեամբ սեսնում են ամեն ինչ և շարունակում իրանց տաղտկացուցիչ, միատեսակ կեանքը: Միշտ մի նոյնն է այդ կեանքը. նա ոչ մի փոփոխութեան չէ ենթարկվում:

Բայց ոչ մենք սխալվեցինք. Թաւրիզում մանաւանդ ձմեռը, մի առանձին ոգևորութիւն պարզապէս նկատելի է լինում. բոլոր երիտասարդները Եւրոպայից և Ռուսաստանից վերադարձած լինելով, մի առանձին խլրտում են զգում հայկական կեանքի մէջ... Շատ դժուար է գիշերները երիտասարդներին գտնել իրանց տանը, նրանք միշտ առանձին խմբեր կազմելով հաւաքվում են կամ այստեղ, կամ այնտեղ և ամբողջ գիշերը անցկացնում խմբովին:

Մարդ մի րոպէ մտածում է, թէ գուցէ երիտասարդները վերադառնալով Եւրոպայից և Ռուսաստանից, ծանօթացած լինելով այնտեղի կեանքի առաւելութիւններին, հասարակական կեանքի նոր հոսանքին, հաւաքվում են միասին խորհրդակցելու, և այստեղի ծովրդի կեանքի պակասաւոր կողմերը ուղղելու մասին խորհելու:

Եւ ինչ ծանր տպաւորութիւն է թողնում, երբ մարդ առիթ է ունենում ներս մտնել այն բնակարանը, ուր հաւաքւած են այդ երիտասարդները: Ցակաւին դրսից լսում էք աղմուկ, դոռում գոչումները: Մտնում էք ներս — սենեակ ծխախոտի ծխի մէջ թաղուած, որեցհացիւ կարելի է լինում նկատել սեղանի շուրջը բոլորած երիտասարդների դէմքերը, մի_մի բուռն սպիտակ և սև փող առաջներին, խաղաթղթերը առաջներին՝ ամբողջապէս կուլ են գնացել թղթախաղի մէջ, աշխարհ են մոռացել: Ինչ փույթ ինչ այն կողմ, փոքրիկ սեղանների վրա դրած «մազղի» են խաղում: Ոմանք էլ հաւաքված մի այլ սեղանի շուրջը խմում են թանգագին խմիչքներ. աղմուկ. և բաբելոնական այդ կեանքը տևում է մինչև կէս գիշեր, երբեմն էլ մինչև լոյս:

Միւս օրվայ ամբողջ քաղաքի միակ խօսակցութիւնը անցած գիշերվայ խմբակների գործունէութիւնն է, թէ որը որքան տարաւ կամ տարվեց: Ահա Թաւրիզի երիտասարդ հայերի միատեսակ և տաղտկալի կեանքի պատկերը...

Մար.

«Մշակ»

# ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Մի քանի տեղերից մեզ գանգատներ են գալիս, որ թերթերը կանոնաւորապէս չեն ստացվում, մինչև իսկ մի քանի համարներ (օր. № 46-ը Դավրէժում և Ռաշտում) չեն ստացել: Հարկ եղած դիմումներ մենք արել ենք փոստային վարչութեան և յոյս ունենք որ այսուհետև կանոնաւորապէս կը ստացւին: Մենք մեր կողմից միշտ, առանց ուշացնելու յանձնում ենք փոստային՝ ամեն համար: Խնդրում ենք մեր բաժանորդներին որ երբ իր ժամանակին չեն ստանում՝ դիմեն այդ մասին իրանց տեղի փոստային վարչութեանը:

—

Արդեօք այս տարի ևս Թեհրանի երկու գրադարանները շարունակում են մուրացկանութեամբ դիմել Կովկասի թերթերին և ձրի թերթ խնդրել: Չէ որ երկու ընթերցարաններն էլ կարող են վճարել: Մէկը մինչև իսկ (Րաֆֆի կլուբը) ունի աւելորդ 100 թուման փող և սակայն իր գրքերի դարանը դատարկ է: Կովկասի թերթերին խորհուրդ ենք տալիս չը քաջալերել Թեհրանի այդ գրադարանների ձրիակերական ախտը:

—

Մինչև այժմ դեռ Հայկազեան դպրոցը մնում է առանց հոգաբարձութեան և ուսուցիչների ռոճիկները անվճար: Չը գիտենք թէ ո՞վ պիտի վճարի Ռուսաստանից բերել տուած ուսուցիչների ռոճիկը: Այդ հրաւէրը արել է Յովհաննէս խան Մասէհեանը և նա է պարտաւոր հոգալ: Յոյս ունենք որ նա թոյլ չի տալ անախորժութիւնների: Մենք յայտնում ենք մեր զարմանքը վերջին շեալ պարոնի ընթացքի վերաբերութեամբ: Կազմալուծեց, առանց մեծամասնութեան ձայնի, միմիայն ուժով, Հայկազեան դպրոցը պահպանող ընկերութիւնը, ինքը վերընտրուեց «Ազգային» կոչւող Հոգաբարձութեան անդամ և այժմ, գործերը տակն ու վրայ անելուց յետոյ, ինչ է նշանակում այդպէս լուռ կենալ: Չէ որ պատասխանատու է նա այդ բոլորի համար:

—

«Ռուսական հեռագրական գործակալութիւնը» հաղորդում է յունվարի 9-ից այսպիսի մի հեռագիր «Թեհրան.— Ղուչան քաղաքը երկրորդ անգամ աւերւած է այնտեղ պատահած երկրաշարժից. մեռնողների թիւը մեծ է. 100 կին բաղնիքի փլատակների տակ մնալով մեռել են:» Մեր թղթակցին խնդրում ենք գրել թէ որքան. ճիշտ է այդ:

—

Ստացանք Կալաց (Ռումանիա) հրատարակուած «Հայկական տարեցոյց» 1895 թւի, խմբագրութեամբ Ղևոնդ քահանայ Փափազեանցի: Այդ օրացոյցը թէ հայերէն է և թէ ռումաներէն: Երեւում, օրացոյցը ունի մի համառօտ ծանօթութիւն Ռումանիայում եղած հայերի մասին: Օրացոյցը սկզբում ունի մի ժամանակագրութիւն, որի մէջ աստւած է. «ի ստեղծմանէ աշխարհի են ամք 7404»: Բաւական չէ այլ ևս տպագրել այդպիսի անճշտութիւններ. չէ որ գիտութիւնը այժմ գրեթէ 30,000,000 տարիներ է հաշւում աշխարհիս սկզբից մինչև այժմ:

—

Թեհրանի Դարվազա Ղազվին թաղի եկեղեցոյ քահանայ տէր Մաշտոցը, որի մասին մի թղթակցութիւն կար մեր թերթի անցեալ համարում, շարունակում է իր սխրագործութիւնները, օրէցօր աւելի սաստիկ:

—

Ղազվինից մեզ գրում են հետևեալը: Յայտնի է, որ տեսչի և ուսուցչի երկար ընդհարումներից յետոյ, փակուեց Ղազվինի փոքրիկ ուսումնարանը: Ցաւելով ասում ենք, որ այդ առթիւ աշակերտներից մի քանիսը ցրուած և ութ ամիսներից ի վեր ուսումնարանը փակուած է մնացել: Դրան պատճառ էր դարձել մէկ կազմարար որ ինք իրան մանկավարժ էր հրատարակել և այստեղի սակաւիկ հասարակութեան մէջ երկպառակութիւն ձգել: Բայց արդէն Ղազվինից հեռացած լինելով այդ մարդը, կրկին ծագել է Ղազվինի սակաւիկ և խաղաղասէր հասարակութեան մէջ ուսումնարանը վերաբացելու ազնիւ միտքը: Եւ տեղույս վաճառականական տների երիտասարդ գործակատարները ուրախութեամբ են մասնակցելու այդ բարի գործին որը ի հարկէ պատիւ կը բերէ իրանց:

—

Վանաք գիւղի Բարեսիրական դպրոցի վարչութիւնը խնդրում է մեզ յայտնել իր շնորհակալութիւնը պ. Մանաս Յովսէփեանին «Շաւիղի» մի օրինակ նըւէրի համար նաև «Արաքսի» խմբագիր պ. Գուլամիրեանին, երեք օրինակ «Արաքսի» համար:

# ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

## ՄԱՄՈՒԼԻ ՏԵՍՈՒԹԻՒՆ

—

⁂ «Տարազ» և «Աղբիւրը» այս տարի էլ դուրս է տւել իր արշինանոց շլացուցիչ յայտարարութիւնը և մեծամեծ խօստումներ է անում ապագայ տարուայ համար. նորանոր աֆերաներն է սարքել «Աղբիւրի» համար. մանուկների պատկերները տպել, մանուկների փոստարկղ եայլն եայլն:

«Տարազի» մի համարում մի ալլանդակ լուր ուշադրութիւն է հրաւիրում իւր վրայ: Երևանի դպրոցների թեմական տեսուչը (մի ոմն Բենիկ աբեղայ) պաշտօնապէս հրամայել է որ այսուհետև այլ ևս քառաձայն կամ երկձայն չ՚երգւի եկեղեցում: «Աստուած մէկ է, ասել է նա, ուստի և երգեցողութիւնն էլ մէկ ձայնով պիտի լինի»... Այդ լոգիկայով՝ պէտք է որ եւրոպական ազգերի Աստուածը չորս կամ վեց հատ լինի, որովհետև նրանց եկեղեցիներում երբէք մէկ ձայնով երգեցողութիւն չէ լինում այլ միշտ 4—6 ձայներով համերգներ: Որպիսի խելացի կրօնաւորներ են դարբնվում Էջմիածնում, ճշմարիտ, և որպիսիներ՞ը են նշանակվում մի ամբողջ թեմի դպրոցների տեսուչ:

⁂ Թեմական տեսուչների վերաբերութեամբ առ հասարակ շատ տխուր լուրեր են հաղորդում Կովկասի լրագիրները: Ահա օրինակ Շուշւայ թեմական տեսուչի մասին «Մշակի» մի լուրը:

«Ղարաբաղի նման հայ գիւղերով լի թեմը ունի միայն... 20 ծխական դպրոց: Այդ նրանից է, որ թեմական տեսուչ նշանակւած է մի անընդունակ մարդ: Անհրաժեշտ է նշանակել մի եռանդուն և բանիմաց տեսուչ: Ժամանակ է վերջապէս, ուշադրութիւն դարձնել այս ընդարձակ թեմի տգիտութեան մէջ խարխափող ժողովուրդի վրա»:

Բանը նրանումն է, որ ամենայն հայոց ներկայ կաթուղիկոսի օրով ո՛չ մի ընդունակ կամ բանիմաց թեմական տեսուչներ չեն նշանակվում. օրինակ ձեզ Երևանի թեմի աբեղայ տեսուչը և իր լոգիկան:

⁂ «Թէ «Հայք» պիտի կրնա՞յ հրատարակել 1895 թւին, դեռ ստոյգ չէ» ահա թէ ինչ է ասում Ամերիկայի այդ հայերէն թերթը իր վերջին համարում: Թող ապահով լինի նա, շատ էլ մի ցաւ չի պատճառել հայի սրտին, եթէ դադարի թերթ մրոտելուց:

Եւ այսպէս մենք մի թեթև ակնարկ նետած ենք համարում մեր առջևում կուտւած անցեալ տարւանից մնացած հայկական թերթերի վրայ: Այն խնդիրը որի մասին առ այժմ յիշել չենք կարող, աւելի մեծ տեղ է գրաւում-և իրաւամբ- թերթերի մէջ. գրեթէ միևնոյն լուրերը նոյն շարադասութեամբ տպում են բոլորն էլ:

⁂ Մեզ մնում է մի քանի խօսք էլ ասել «Հայրենիքի» մասին: Այդ օրաթերթը տալիս է յաճախ լաւ առաջնորդողներ: Վերջին համարներից մէկի մի առաջնորդող վերաբերում է Սուչաւայից հայ լրագիրների մէջ դրւած մի յայտարարութեան, որով սուչաւացիք ուզում են մի վարդապետ կամ քահանայ որ լինի ուշիմ, զուարթ, տեսօք, գիտնական պարկեշտ, աստուածաբան, լեզուագէտ»:

«Հայրենիքը» կարծում է թէ Սուչաւայի հայերուն շատ դժուար պիտի ըլլայ մեր մէջէն գտնել իրենց մտածածպար եկեղեցական մը»:

Մենք մեր կողմից, մատնանիշ կ՚անենք հետևեալ անձերի վրայ.

1) Խրեղ եպիսկոպոս Սրապեան, առաջնորդ Երևանի:

Մեր նշանաբանն է. «Մերկ ճշմարտութիւն». մեր դրօշն է այդ. ով կուզէ թող գայ նրա տակ։ Իսկ եթէ մեզ հալածեն, ծաղրեն և մեր «լուսամուտների ապակիներին իսկ քար ձգեն», թող ապահով լինին, որ մեր բռնած դրօշը ոչնչով չի վնասուիլ դրանից։ Վաղ թէ ուշ, յաղթողը ճշմարտութիւնը կը լինի։

Մեր խօսքը ուղղում ենք այն երիտասարդութեանը, որ դեռ չէ փչացել։ Ապագայի այն սերնդին, որին դեռ չեն ապականել։ Տուէք մեզ ձեր ձեռքը և մաքրենք միասին մեր մթնոլորդը։

Վ. Փ.

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

### ՆԱՄԱԿ ԴԱՎՐԷԺԻՑ

2 յուն. 95

Ոչ մի ժամանակ Դավրէժի հայերի կեանքը այնքան լիքը չէ եղել սկանդալներով, որքան այս տարի։ Խառնակութիւններ դպրոցներում, հասարակական կեանքում, եկեղեցում։ Հոգաբարձական և ուսուցչական մարմինների միջև—ահա ձեզ մեր կեանքի քրօնիկական երևոյթները։ Կեանքը իւր սովորական ընթացքից դուրս գալով՝ երևան է բերել այնպիսի ճնշող, անմարդավայել պայմաններ ու կարգեր, որոնք իրենց զգալի դառնութեամբ սպառում են մեր սառնասրտութիւնն ու համբերութիւնը։ Մի տեղ դպրոցի աշակերտները բողոքում են իրենց համբակ ուսուցչի դէմ, թէ նա ոչինչ չը գիտէ, չէ կարողանում դասաւանդել և մի բան սովորեցնել, այդ բողոքը հասնում է վերակացուի, տեսչի, հոգաբարձուների և մինչև իսկ.... թեմակալ առաջնորդի ականջը, բայց բոլորն էլ մատների արանքով են նայում այդ անկեղծ բողոքին, որովհետև նրանք ոչ մի հոգ ու խնամք և հասկացողութիւն չունեն իրանց յանձնուած մանուկների, ժողովրդի և հասարակական հիմնարկութիւնների առաջադիմութեան մասին։ Մի ուրիշ տեղ կեղեքում և տմարդաբար անարգւում են իրենց պաշտօնին նուիրուած ուսուցիչներ այն պատճառով, որ սրանք քաջութիւն են ունեցել մարդկանց ճակատին խփելու իրենց անաղնիւ, կեղտոտ արարքներն ու խաբեբայութիւնները, իսկ այն մարդիկ, որոնց պաշտօնըն ու կոչումը պահանջում էր, որ պաշտպան կանգնէին իրենց իրաւախեղդուած ընկերներին, նրանք, որոնք բարոյապէս պարտաւոր էին ջախջախել խաւարասէր բուերի վայրոցն ու խաւարային ջանքերը, նրանք մինչև անգամ հակւում են լուսոյ և ճշմարտութեան թշնամիների կողմը և կուրօրէն ոտնակոխ են անում այն սկզբունքները, գաղափարներն ու մտքերը, որոնց կողմնակից էին նրանք մի քանի օր առաջ։ Ամենացաւալին այն է, որ մեր հասարակութիւնն ոչխարային միամտութեամբ և բթամտութեամբ հանդիսատես է լինում այդպիսի երևոյթների և չէ ուզում մտնել իր իրաւունքները պաշտպանելու դերի մէջ։ Եւ քանի կը տևէ խաւարի այս ապականիչ տիրապետութիւնը, քանի կը շարունակեն արխիւալին կօպէկանոց ղեկավարների և տգէտ ու վնասակար մարդկանց առաջնորդութեանը յանձնել հասարակական գործեր և քանի մեր ժողովրդի գիտակցական մասնակցութիւնը բացակայ կը լինի հանրային գործերի մէջ, այնքան վտանգուած և կորստեան ճանապարհի վրայ կանգնած կը լինի պարսկահայոց առաջադիմութեան և լուսաւորութեան գործը։ Մի՞թէ հէնց այդ խաւարային իշխանապետութեան արգասիքը չեն այն սրտաճմլիկ լուրերը, որոնք անդադար հասնում են մեզ գաւառներից. ապօրինութիւն, կաշառակերութիւն, վամպիրների բանակի հարստահարութիւններն ու աննկարագրելի կեղեքումները, ահա սրանք են կազմում մեր սրտացաւ մամուլի թղթակցութիւնները գաւառներից։ Հաւատում ենք, համոզուած ենք, որ, շուտ—ուշ, խաւարը կը փարատուի, բայց չը մոռանանք, որ ամեն մի առաջադիմութիւն կատարվում է ժողովրդի միջոցով և ժողովրդի համար, ուստի առաջ պէտք է քաշել ժողովրդի գիտակցութիւնը։

Հ.—Տ.

### ՆԱՄԱԿ ՈՒՐՄԻԱՅԻՑ

30 Դեկ. 94

Այս օրերս մեր ձեռքն անցաւ «Նոր-Դարի» համարներից մէկը, որի մէջ մեր ուշադրութիւնը գրաւեց «Բողոքական և կաթոլիկ հայերը Կարսում» յօդուածը։ Մենք չը գիտենք ուրիշ ընթերցողները ինչ տպաւորութիւն են ստացել այդ յօդուածից և թէ արդեօք, եղել է որ և իցէ մէկը, որ ընդդէմ գրած կամ պատասխանած լինի դրան թէ ոչ։ Բայց մենք թէև մի քիչ ուշ, կը դանք մի քանի դիտողութիւններ անելու այդ յօդուածի վրայ, այն եւ «Նաւղում», որովհետև մասամբ պարսկահայերիս վերաբերութիւն պիտի ունենայ։

Թէև այդ մի նոր բան չէ խաւարամիտների կողմից ցեխ շպրտել ամեն իրենց համախոհ չեղողների վրայ, բայց որովհետև այդ յօդուածով մեր պ. Յովսէփեանը յարձակւում է գործել մի բստաւոր բազմութեան վրայ, միայն իրան շուրջը, ոտքի տակը նայելով և բերելով այնպիսի փաստեր, որոնք ներկայ ժամանակում փորձով հերքուած են և միայն երկպառակութեան նշան են, ըստիպուած մենք մի քանի խօսք պիտի ասենք։

Դրանով մեր նպատակը չէ պաշտպանել հայ-բողոքականներին իբրև անմխալականներ, ճշմարիտ հայեր, ինչպէս Պ. Յովսէփեանը ճգնել է ճոռոմաբանելով ցոյց տալ, թէ հայութիւնը կայանում է միայն «հայադաւանութեան» մէջ, յառաջ բերելով մի քանի նեղ, խաւար, երեխայական փաստեր—վեր առնելով միայն իրան տեսած մի քանի տգէտ անուս հայ-բողոքականներին։ Իմ նպատակս է պաշտպանել ճշմարտութիւնը, որին սովոր են միշտ ոտնակոխ անել մեր պարոն կեղծաւոր յառաջդիմականները, մանաւանդ այդպիսի կէտերում։

Պ. Յովսէփեանը իր նպատակին հասնելու համար, վերցնում է միայն Կարսի տասնյ այն էլ տգէտ հայ-բողոքականներին, մոռանալով որ դրանք կարող են լինել բացառութիւններ, և այս հարցն է ուղղում ամբողջ բողոքական մասսային. «ընդհանուր հայութեան վերաբերեալ որ մի գաղափարին էք ծառայել» և աւելացնում է. «ոչ մի, այո, ոչ մի»։

Ի՞նչ անեն խեղճ բողոքական հայերը եթէ գտնվում են իրանց մէջ տգէտ խաւարամիտներ, ստարամոլներ. դրանով ամբողջ մասսան է յանցաւոր. չէ՞ որ կան այդպիսիները և «հայադաւան» կոչւածներիս մէջ։ Անցեալ տարի, պ. Յովսէփեանը պէտք է իմանար որ նոյն իսկ իրան սովեալներին մասին բերած փաստը հակառակն է կատարուած մեզ մօտ։ Մինչդեռ ամբողջ Թրքահայաստանը սովից տանջվում էր, ամեն տեղ հանգանակութիւններ էին ձեռնարկել, մենք պարսկաստանցիներս երբէք չուզեցինք մտածել այդ մասին, թէև «Նաւղում» քանիցս հրաւէր կարդացւեցաւ։ Նոյն իսկ հազարաւոր սովատանջ թըշուառներ գաղթեցին Սալմաստում, հարկաւոր էր օգնութեան հասնել, գոնէ խեղճերի մերկ մարմինները ծածկելու, բայց մենք «հայադաւաններս», թէև խորտիկներով մեր սեղանները զարդարուած՝ չուզեցինք նրանց անունն անգամ յիշել։ Դարձեալ հայ-բողոքականներն էին որ մասամբ օգնութեան հա-

---

բութիւն դնել։ Եւ ահա այդ երկար նամակի ամփոփումը.

«Անժէլիք Պառան վաթսուն տարեկան է, և 47 տարուց ի վեր իր կեանքը զոհողութեան ու անձնուիրութեան երկար մի օրինակ է եղել միայն։ Շատ աղքատ մարդոց աղջիկ էր. տասներկու զաւակների ութերորդը. բարի և արի բանուորուհի. երբէք չի ուզել ծնողքից բաժնուել։ 1847-ին, դարմանում է իր երեք պզտիկ եղբայրները, որոնք ծաղիկից բռնուել էին։ Այն ժամանակ 13 տարեկան էր։ 1854-ին որդեգրեց փոքր եղբօր մի զաւակը որի մայրը մեռել էր. յետոյ, քանի տարի շարունակ, գիշեր ցերեկ աշխատել է ապրեցնել իր անկար ծնողքը։ Եւ երբոր աշխարհիս վրայ մինակ մնաց, առանց ընտանիքի, իրաւունք ունէր հանգչելու, վերջապէս քիչ էլ ինքն իրեն համար ապրելու. բայց վարժուել էր անձը նուիրելու, զոհելու. չէր կարող ուրիշ բան անել, եւ ինքն իրեն ամբողջովին նուիրեց աղքատների և հիւանդների։ Անժէլիք Պառան այդ գիւղի ու շրջակայ գիւղերի նախախնամութիւնն է։ Ուր որ մի դժբաղդութիւն կայ օգնելիք, տարափոխիկ մի հիւանդութիւն կայ դարմանելիք, ինքն այնտեղ է ամենից առաջ, միշտ։»

«Գիւղի քահանան է ստորագրում, յետոյ գիւղապետը, յետոյ գիւղական խորհրդի անդամները, յետոյ այդ փոքրիկ գիւղից վաճառական. այս ինչ, ատաղձագործ. այն ինչ, սայլապան. այն ինչ, կօշկակար։ Կաշա անճարտար ստորագրութիւնների մի շարք է այդ, գրուած այնպիսի ձեռքերով, որոնց համար մշակի ու բանւորի գործիքները աւելի հանգիստ ու աւելի թեթև են քան մի գրիչ։

«Մէկ խօսքով Ֆրանսայի ամբողջ մի գիւղ է որ ասում է մեզ. «Մեր մէջ մի կատարեալ կին կայ, որ միշտ աչքերնիս տակ ապրել է, ու ամէնքս էլ սքանչանում ենք իր վրայ, սիրում ենք նրան։ Ձեր առաքինութեան մրցանակներից մէկը իրեն լնորհեցէք։ Ամենքս էլ ուրախ պիտի լինինք դրանով և իրեն տուած դրամները երկար ժամանակ չպիտի մնայ իր ձեռքը. անմիջապէս պիտի երթայ իր միակ բարեկամներին—աղքատներին ու հիւանդներին»։

«Հարիւրի չափ ֆրանսական գիւղեր ամեն տարի նմանօրինակ նամակներ են ուղարկում և Ակադեմիան մի մրցանակ է շնորհում Անժէլիք Պառանի և ուրիշ երսուն-քառասուն այն խոնարհ ու ազնիւ աղջիկներին, որոնք գիւղերի մէջ կամաւոր հիւանդապահ են կոչվում եւ որոնք յաճախ ամբողջ մի գիւղի հանրային նպաստամատոյց վարչութիւնն են ներկայացնում իրենք միայնակ։ Ամենի պատմութիւնն էլ մէկ է և կարող է մէկ քանի բառով պատմուիլ. իրենք զիրենք ուրիշներին նուիրել միշտ, միշտ, միշտ։ Ահա իրենց կեանքը, ահա իրենց երջանկութիւնը։ Աստուած է, [illegible] մարդ միշտ, պէտք եղածի չափ ուժ ունի՝ ուրիշների դժբաղդութեանը հանդուրժելու համար. դրանք չեն ունեցել այդ ուժը։ Դրանք աղքատ, աղքատների մէջ են ապրում, աղքատների համար։ Աշխատում են, ու ամբողջ վաստակածներն իրենց որդեգրածներինն է։ Հասկանում են, որ նրանց ցաւը մեղմելու լաւագոյն եղանակը, նրանց հետ նոյն ցաւը կրելն է։ Եւ ինչպէս են գտնում այդքան բարութեան վարձքը։ Այդպէս ուրիշներին թշուառութեան մէջ ապաւինելով, մի կերպով ազատվում են իրենց անձնական թշուառութիւնից, էլ չեն զգում ցաւը, ժամանակ չունին իրենք իրենց հաշւին դժբաղդ լինելու, եւ չեն նշմարում թէ այնչափ տխուր ու այնչափ դժնդակ մի կեանք են վարում, որչափ նրանք, որոնց մորմոքումը թեթևացնում են։

«Պ. դը Մոնթիոն երկու տարուան մի տեւողութիւն էր խնդրել անձնուիրական գործերի համար, եւ քսան, երեսուն, քառասուն տարիից ի վեր է, որ այդ կինները իրենց կեանքը նուիրում են աղքատութեան ու ցաւի թեթևացման։ Պասկալը ասել է, թէ շարունակութիւնը զզուեցնում է ամէն բանի մէջ։ Ոչ, ոչ ամեն բանի մէջ, որովհետև չէ զզուեցնում այդ արի ու պարզ հոգիները որոնք բարիի մէջ միայն հաճոյք են գտնում։ Այդ գերմարդկային էակները, առանց փնտռելու, պարտականութեան բնազդով միայն, գտել են մարդկային իմաստութեան բուն գաղտնիքը, ներքին ամէն տխրութիւնից ճողոպրելու միակ միջոցը որ է ապրել ուրիշների համար՝ բոլորովին մոռանալով ինքզինքը։ Անգիտանում են այն նոր գիտութիւնը, «ես»ի զարգացումը, որ լոկ իր անձի պաշտամունքն է. յաղթական կերպով ապացուցանում են մեզ որ անարծաթ առաքինութիւնը աւելորդ մի կահ չէ, եւ պերճանքների ամենից ազնիւը տալիս են իրենք իրենց, պերճանքը բարութեան, որ ճշմարտապէս անսպառելի միակ գանձն է, որովհետև վերանորոգվում է եւ նոյն իսկ աճում որչափ որ ծախսուի։

(Կը շարունակուի)

«Հայրենիք»

2) Վահան վարդապետ տ. Գրիգորեան Էջմիածնում,

3) Բենիկ աբեղայ, Երևանի թեմական տեսուչը։

4) Շախեան վարդապետ, Ալէքսանդրբապոլի յաջորդ։

Չէ՞ որ դրանք են ամենայն հայոց վեհափառ կաթուղիկոսի ամենամօտ խորհրդականներն ու սիրելիները։

Խեղճ Սուչավացիք, մոռացել են որ երբ ջրաղացը կորսվում է, էլ չախչախը չեն փնտռում....

***«Արմենիայի» վերջին համարի բովանդակութիւնը։

«Նամակ Բուլգարիայէն։ Նամակ Բուլգարիայէն։ Նամակ Բուլգարիայէն և... էլի նամակ Բուլգարիայէն։

Ներողութիւն... մոռացանք՝ «Ծախու գրքեր և Յայտարարութիւններ»....

Ա. Ֆ.

## ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—«Times» լրագրին Պէկինից հաղորդում են որ Եապոնիա ուղարկվող չինական դեսպանը երեկ ընդունվեց բոդդիխանից հրաժեշտիունկնդրութեան համար։ Եապոնիան մերժում է զինադադարը։ Ամերիկական դեսպանը կարծում է, որ Եապոնիայի հետ բանակցութիւնները անաջող կը լինեն և որ եապոնացիները կը յայտնեն խաղաղութեան իրանց վերջնական պայմանները միայն այն ժամանակ, երբ կը գրաւեն Պէկին։

—Վիէննայից հեռագրում են, որ Մակեդոնիայում ընդհարում է տեղի ունեցել յոյների և բոլգարների մէջ։ Զատերը կալանաւորուած են։

—Հիւսիսային գործ. հաղորդում է, որ Ռուսաստանում նոր տարուց սկսվելու է գործադրվել խմիչքների արքունական վաճառման վերաբերեալ կանոնագրութիւնը, որպէս փորձ 4 նահանգներում Պէրմի, Ուֆիմի, Օրէնբուրգ և Սամարայի։ Հանգուցեալ Ալէքսանդր III Կայսրի կամքով, այդ փորձին ձեռնարկված է ժողովրդական բարոյականութիւնը և ժողովրդական առողջութիւնը պաշտպանելու համար այժմեան գինետների ապականիչ ազդեցութիւնից, գինետներ, որոնք մի և նոյն ժամանակ պատճառում են ժողովրդին և անհամար նիւթական վնաս, արմատախիլ անելով նրա բարօրութիւնը։

—Գերմանական ըէյխստագի մէջ անցեալ տարւայ վերջին ամիսներում պատահել էր մի ծանր դէպք։ Երբ կայսրը ներս էր մտել սրահը, սոցիալիստ երեսփոխանները ոտքի չէին ելել և «կէցցէ» կանչել։ Այդ բանը առիթ տուեց մի առաջարկութեան, որով պէտք է սոցիալիստ Լէյբկնիխտը ենթարկուէր դատի բայց մերժուեց առաջարկութիւնը։ Այժմ ըէյխստագը ձայների մեծամասնութեամբ մի օրինագիծ է կազմել յեղափոխական ձգտումների վերաբերութեամբ։ Մի ընդհանուր հալածանք է սկսել այժմ էլ սոցիալիստների դէմ Գերմանիայում։

—Յունվար 1-ից հեռագրում են որ, Ժապոնեան առաջանում է դէպի Չինաստանի խորքերը, վերցնելով քաղաքներ։

—Բերլինից, յունվար 2 ից հեռագրում են հետևեալը։ Պարլամենտում առաջարկուած է մի հարց գերմանական հպատակների պաշտպանութեան առիթով արտասահմանում։ Արտաքին գործոց մինիստրը յայտնել է, որ «գերմանական հպատակներից նրանք, որոնք կը միջամտեն ուրիշների ներքին կռիւներին, չեն կարող Գերմանիայի կողմից պաշտպանութիւն յուսալ»։

—Ռուսաց նոր կայսր Նիկոլայ II-ի գահակալութեան մանիֆեստի հիման վրայ, ներում է շնորհուած 200,000 յանցաւորների։

—Լրագիրները հաղորդում են մի քանի ուրախալի լուրեր Ռուսաց կայսր Նիկոլայ II-ի նոր հրամանների առիթով։ Նորա հրամանը վերաբերում է մի քանի նոր օրէնքների պատրաստութեան համար, որոնցից գլխաւորն է նախնական ուսումը պարտաւորիչ դարձնել։ Ասում են որ կայսրը կամենում է ջնջել նաև հրէաների դէմ հրատարակուած օրէնքները։

—Կ. Պոլսի «Հայրենիք»թերթի մէջ կարդում ենք հետևեալը։ «Պաշտօնական Զեկուցում. Վանի մէջ գրավաճառութիւն ընող Տիգրան անուն հայուն քով շատ մը մնասակար գրքեր գտնուեր են։ Վանի կուսակալութիւնը կը ծանուցանէ թէ այդ անձը յանձնուեր է դատարանին»։

—Եւրոպական լրագիրները հաղորդում են որ անգլիական «Daily News» թերթի թղթակից Շարլս Ֆիցջերալդը անյայտացել է։ Բազմաթիւ կասկածներ կան։ Հայ ընթերցողին յայտնի պիտի լինի Ֆիցջերալդի անունը որովհետև նա անգլիական թերթի կողմից քանի անգամ Կովկաս է եկել։

—Յունվար 4-ին ֆրանսիական հանրապետութեան նախագահ Կազիմիր Պէրիէ տուաւ իր հրաժարականը։

## ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Կովկասի հայկական դպրոցների թիւը, որպէս անցեալ տարուայ ստատիստիկան է ցոյց տալիս, 173 արական սեռի է և 48 իգական։ ուսուցիչների ընդհանուր թիւն է 315. ուսուցչուհիներինը 129։ Աշակերտներ—5910 և աշակերտուհիներ 4457։ Ուրեմն 221 ուսումնարան, 10367 աշակերտ և 445 ուսուցիչ։

Ժապոնեան, որ սրանից 30 տարի առաջ լրագիր բառը չըգիտեր ինչ էր, այժմ միմիայն Տոկիոյի մէջ 40-ից աւելի լրագիր և 300 պարբերական թերթեր են հրատարակվում։ Ժապոնական ամենառաջին թերթը համարվում է «Մօշիվօկուսա» թերթը, որ նշանակում է «Ծովային խոտ, աղ և վայրի խոտ» դա նշանակում է որ թերթը ծովային և լեռնային խոտերի մի հաւաքածուի նման ամեն տեսակ լուրեր էր պարունակելու։ Խմբագիրը մի դեղագործ էր։ Բայց առաջին քաղաքական լրագիրը եղաւ «Նուրին-Հօշի-Ձին-Պոն» անունով 1872 թ-ին։ Այդ երկար անունը նշանակում է «Փոստ, ազդ, լուրեր»։

Արտօնատէր—Հրատարակիչ՝
ԱՆԴՐԷԱՍ ԲԷԿՆԱԶԱՐԵԱՆՑ

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

## ՀԱՐԻՒՐԱՄԵԱՅ
### ՀԱՅ
ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏԿԵՐՆԵՐԻՑ

Ծախվում են խմբագրութեան մէջ Գինն է Թէհրանում վեց ղրան իսկ Պարսկաստանի օտար քաղաքների համար 8 ղրան։

Ով որ ուզում է ՊԱՐՍԿԱԿԱՆ ՀԻՆ կամ ՆՈՐ նամակագրոշմներ վաճառել, ուղղակի իւր ունեցածի ՆՄՈՅՇՆԵՐԻՑ ուղարկի և վերջնական ԱՐԺԷՔԸ յայտնի առ պ. Հրանդ Յ. Մարիմեանին, Դավրէժ, հետևեալ հասցէով։ Hrand O. Marimian, The Imperial Bank of Persia. Tauris.

## „ՄՇԱԿ„
ԳՐԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է ԹԻՖԼԻԶՈՒՄ

Տարեկան բաժանորդագինն է 10 ր. կէս տարուանը 6 ր.

Դուրս է գալիս շաբաթը 3 անգամ. հասցէ. Tiflis (Russie) Rédaction «MSCHAK».

## „ՄՈՒՐՃ„
ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՆ ԳՐԱԿԱՆ ԱՄՍԱԳԻՐ
Հրատ. Թիֆլիզում
Տարեկան բաժանորդ. 10 ր.
Հասցէ Rédaction «MOURTCH» Tiflis (Russie)
Ուսումնարանների և աշակերտների համար՝ 8 ր.

## „ՏԱՐԱԶ„
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ
Բաժանորդագինն է՝ 6 բուբլի, արտասահմանից 10 բուբլի։

Հասցէ. Tiflis; Rédaction du journal «TARAZ»

## „ԱՂԲԻՒՐ„
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ԱՄՍԱԹԵՐԹ
Բաժանորդագինն է՝ 3 ր. արտասահմանից 4 բուբլի։

Հասցէն՝ Tiflis, Rédaction de la Revue «AGBUR».

## „L'ARMENIE„
JOURNAL POLITIQUE ET LITTÉRAIRE

Paraissant le 1re. de chaque mois à Londres.

Prix d'abonnement 18 fr. 75.

Adresse. Rédaction de «L'Arménie» 33 De Vere Gardens. 33 Londres. W.

## ՀԱՅՐԵՆԻՔ
ՕՐԱԹԵՐԹ
ՀՐԱՏԱՐԱԿՎՈՒՄ Է Կ. ՊՈԼՍՈՒՄ
Տարեկան բաժանորդագինն է օտար երկիրների համար 25 ֆրանկ.

Հասցէն՝ Rédaction «HAIRÉNIK» Galata, ancien local de la Banque Imp. Ottomane.

Constantinople (Turquie

## ԾԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ 1895 Թ.

ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ „ՇԱՒԻՂ„ ԵՐԿՐՈՐԴ ՏԱՐԻ

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

«ՇԱՒԻՂԸ» հրատարակվում է Թէհրանում նոյն ծրագրով և նոյն ուղղութեամբ։ «ՇԱՒԻՂԻ» բաժանորդագինն է մէկ թուման, կէս տարուանը վեց ղրան։ Արտասահմանում՝ 3 բուբլի կամ 8 ֆրանկ, կէս տարուանը 2 ր. կամ 4 ֆրանկ։

Արտասահմանից դրամական ծրարները կարող են ուղարկել հետևեալ հասցէով. Черезъ Баку Россійской ИМПЕРАТОРСКОЙ Миссіи въ Тегеранѣ пер. А. Бекъ-Назарову. Իսկ նամակներ և թղթակցութիւններ հետևեալ հասցէով, Téhéran, Rédaction „CHAVIGH„.

Մեր գործակալներն։ Սալմաստում՝ Յովհաննէս Ապրէսեանց, Արտաբիլում՝ Յակոբ Էլչիբէկեան. Նոր-Ջուղայում Յովսէփ Բարսեղեանց. Բուշիրում՝ պ. Կ. Զէյթունեան Մարաղայում՝ Մելքոն Խալափեանց. Ռաշտում՝ Ալէքսան Յովսէփեանց. Համադանում՝ Յակոբ Յակոբեանց։

Ապառիկ բաժանորդագրութիւն չէ ընդունվում։